



56. ԹՈՒՉՈՒ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մե աղքատ թոռչի էր ապրում: Օրը աշխատում, օրը ուտում էր, էնքան որ աղքատ էր: Ամեն օր էթում էր չայը, ձուկ բռնում, թրջված, դողալով տուն էր գալում, տորբակը ձուկ լցած, շատ անգամ էլ դառտակ: Բերած ձուկը տղեն տանում էր ծախում, էդ տեսակով ապրում ին: Տղեն մեծ էր՝ 18-20 տարեկան, արհեստ չունեք: Հերն էլ չէր թողում, որ տղեն ձուկ բռնա, թոռչի դառնա: Վախենում էր, որ տղեն մրսի, հիվանդանա կամ խեղդվի: Հինքն էր ու էդ մե տղեն:

Ազիզ էր պահում: Թոռչու տղեն բերած ձկան մե մասը թողում էր տունը, որ իրանք ուտեն կամ հարևաններին տան, կարող ա հիվանդի համար տանեն, իսկ կեսը տանում էր բազար կամ տնետուն պտտցնում ու ծախում:

Ծախած ձկան փողով տան համար, ինչ որ պետքն էր, առնում էր, բերում, մնացած փողն էլ տալում էր հորը յա մորը: Ծատ խելոք տղա էր: Փողը քոռ ու փուճ չէր անում, տենում էր, որ խեղճ հերը ինչ չարչարանքով ա ձուկ բռնում: Հարևանների աղջիկների աչկը էդ տղի վրեն էր:

Մե օր էլ թոռչու տղեն, ձուկը տանելով, ձեն տալով. «Լավ թարմ ձուկը», էթում էր: Հընցավ թաքավորի պալատի մոտով: Էդ սհաթին թաքավորի աղջիկը պալատի երկրորդ հարկի օթաղի ակուշկից գլոխը դուս էր հանե, էթող-գալողին էր թամաչա անում: Որ թոռչու տղի ձենը լսաց, հիշկաց տղի յանը: Սիրտը կպավ: Տղին կանչեց իրա օթաղը: Ծատ հիշկաց, թախմին արավ, տեսավ՝ ինչ տղա, ոնց որ շահաղա: Ձուկ առավ, մե տասանոց ոսկի տվեց, ասավ, որ ամեն օր բերա: Առաջինը ինքը կրվերցա, ինչքան որ պետք ա, մնացածը թո ծախա ուրիշներին:

Թոռչու տղեն խոսք տվեց, որ կրբերա, ու գնաց: Էս տեսակ մեկ թե էրկու ամիս տղեն ամեն օր ձուկը վերցում, վազնում էր պալատի յանը, որ թաքավորի աղջկան տենա, ձուկը տա: Տեսավ, որ աղջիկը սիրահարվեք ա վրեն, հինքն էլ ա սիրում:

Թաքավորի աղջիկը խոսք ա գցում, հանաք անում, մե օր էլ ասավ.—Սիրած աղջիկ ունե՞ս, թոռչո՛ւ տղա, ասա՛, նվեր տամ, տա՛ր քո սիրածին: Էրևում ա սիրածդ շատ խորոտ ա:

—Սիրած աղջիկ ունեմ, թաքավորի՛ աղջիկ, հրմա ամաչում եմ, որ ասեմ, թե սիրում եմ: Մեկ էլ, որ ես աղքատ թոռչու տղա եմ, ինքն հարուստի, իշխանից էլ մեծ մարդու աղջիկ ա: Ես՝ ով, էն աղջիկն՝ ով:

Թաքավորի աղջիկն էլ բան չասավ, մե ոսկի տվեց ու տղի գնալուց հետո մտածմունքի մեջ ընկավ տղի ասածին վրեն: «Իշխանից էլ մեծ մարդու աղջիկ ա»: Դե իշխանից մեծ մարդ թաքավորն ա, ուրեմն խոսքն իմ մասին ա: Էս աղջիկն էլ քուն-դադար չունեք: Գիշեր-ցերեկ տղեն աչկի հառեչն էր: Հըլա լուսը չըբացված, գլոխը ակոռկից դուս էր բերում, աչկը տղի ճամբեն, անգաճը տղի ձենին:

Մե օր էլ տղին ասավ.—Թոռչո՛ւ տղա, դու էն օրը խոսքը կիսատ թողիր, քո սիրած աղջկա ոչ անունն ասեցիր, ոչ էլ ասեցիր, թե ում աղջիկն ա: Դու ասա ում աղջիկն ա, ես իշխանի աղջկան վայել նվեր տամ, տար քո սիրածին:

—Չէ՛, թաքավորի՛ աղջիկ, ուզում ես հրաման տուր թո գլոխս կտրեն, էլի չեմ ասի, թե ով ա: Ես ի՞նչ իմանամ՝ ինքն էլ սիրո՞ւմ ա: Մենակ հո իմ սիրով չի: Զուկ ծախելով եմ ծանոթացե, ո՞նց ասեմ, որ սիրում եմ: Մեկ էլ տեսար հրամայեց տփեն, դուս անեն, ես ի՞նչ կանամ ասի, քանի՞ գլխի տեր եմ:

Թաքավորի աղջիկն էլի պատասխան չըստացավ: Տղեն ոսկին վերցուց, գնաց: Թաքավորի աղջիկը չըհամբերեց: Մյուս օրը, որ թոռչու տղեն էկավ, ձուկը տվեց, փողը վերցուց, որ էթա, թաքավորի աղջիկը ձեռից բռնեց:

—Թոռչո՛ւ տղա, սերս քեզի ա կպե: Թե ուրիշ սիրած չունես, ասա՛, թե ունես, էլի ասա՛:

—Իմ սիրած աղջկա հերը իշխաններից էլ մեծ ա, թաքավորի աղջիկ, որ ասեմ, իրանք լսան, գլոխս կըկտրեն, չեմ կանա ասի: Գլոխս հո չի ցավում, որ ասեմ:

—Դե որ դու չես կանա ասի, ես ասեր եմ, էս էլ իմ նչանը,—ասավ ու տղի թուշը պաչեց:

—Էս էլ իմ նչանը, իշխաններից մեծի աղջիկ,—ասավ թոռչու տղեն ու թաքավորի աղջկա էրկու թուշը պաչեց:

—Թաքավորի՛ աղջիկ, առաջի օրվանից մենք սիրահարվանք, դու ամաչում իր ասել, ես էլ՝ վախենում ի: Մտածում ի, թե ո՞նց ասեմ: Ախր ես՝ թոռչու տղա, քուչեքում՝ ձուկ ծախող, էնի՛ թաքավորի աղջիկ: Հիմանան, վրես կըծծղան, գլոխս կըկտրեն, ես ո՞վ եմ, որ թաքավորի աղջկան աչկ դնեմ:

էդէ էր պատճառը, որ ես ձեն չի անում: Ըստուց ետը գլոխս էլ որ կտրեն, իմը դու ես: Ինչ որ հրամայես, կրկատարեմ: Մե խնդիր ունեմ, թաքավորի՛ աղջիկ: Էս բանը մեր մեջ գաղտնիք մնա: Իմ մասին չեմ մտածում: Մտածում եմ քո մասին ու իմ ծնողների մասին: Թաքավորը որ իմանա, իմ ծնողներին սյուրբայուն կանա: Դու էլ խայտառակ կըլնես, որ սիրահարվեր ես մե թոռչու տղի վրեն:

Սպասենք, տենանք՝ վերչը ինչ ա ըլնում:

Մենք էլ մեր անելիքը լավ մտածենք, կշռադատենք, փախնելու ա՛ փախնենք, մնալու ա՛ մնանք: Օրը գա, բարին՝ հետը:

—Թոռչո՛ւ տղա, կա-չըկա, դու իմն ես, ես՝ քոնը,—ասավ թաքավորի աղջիկը,—մեռնենք իրար հետ, ապրենք իրար հետ: Որ էկավ ժամանակը, որ ինձի մարդու տան, ես հորս կասեմ, որ սիրած ունեմ, տո՛ւր իմ սիրածին: Թե որ չըտա, տա վագրի, վաքլի կամ մե թաքավորի տղի, ես չեմ ուզի: Որ զոռով տա, դեղ կըխմեմ, կըմեռնեմ կամ կըփախնենք ուրիշ երկիր, կապրենք: Էսօրվանից ես կըմտածեմ մեզի ապրուստի միջոց հավաքելու մասին: Հիմի հազար ոսկի ունեմ:

Ասավ, մե բուռ ոսկի տվեց թոռչու տղին, նորից թչները պաչեց ու ճամբու դրեց:

Պայմանավորվան, որ ամեն օր ձուկ բերա: Ձուկը իրար տենալու մահանա ա: Ձուկն առնում էր, տալում ջայռեքին, էփում ուտում ին: Ըստոնց սերն էլի մե տարի շարունակվավ: Հիմի խաբար տանք թոռչուց:

Թոռչին մե օր տղին ասավ.—Տղա՛ ջան, ես մտածում եմ էն մասին, որ դու վատ տղա ես կամ գողություն ես անում: Դու գողություն արող չես, կեղծ բան չես անի, հըմա որտեղի՞ց ես օրական մե ոսկի ու մանր փող բերում: Ասենք, մանր փողը մեր ձկան հախն ա, թանկ ես ծախում, բա ոսկի՞ն որտեղից ա, արի դո՛ւզն ասա:

—Հայրի՛կ, ես քեզի ու իմ մորը չեմ խափի: Հալը-ղսեն էսենց ու էսենց: Թաքավորի աղջիկը սիրահարվեր ա վրես, ես էլ իրանն եմ սիրում, ամեն օր ձուկ եմ տանում, օրական մե ոսկի ա տալում: Մե անքամ էլ, որ բացատրվանք, մե բուռ ոսկի լցեց ջերս, տվի մայրիկին:

Թոռչին որ էս լսաց, տղին հավատաց, հըմա խորը մտքի մեջ ընկավ, գլոխն էլ կախեց, նիյաթն էլ:

Տղեն ասավ.—Ի՞նչ կա, հայրի՛կ, ասա՛, քո խոսքը խոսք ա, իմ համար օրենք ա, քո խոսքից դուս չեմ գա:

—Դու թաքավորի աղջկան խոսք տվե՞լ ես, որ դու էլ ես սիրում, որ կա-չըկա, թաքավորի աղջիկն ա քոնը:

—Տվեր եմ, հայրի՛կ:

—էլ ի՞նչ ասեմ, ասելու բան թողե՞ր ես, որ ասեմ:

—Ասա՛, ինչ որ մտքիդ կա, Հայրի՛կ:

—Տղա՛ ջան, դու մեր մեկ ու ճար տղեն ես, մեր ծուխը ծխաց-
րողը, մեր օրն ու ումբը: Ինչ որ սրտիս կա, կասեմ, մնացածը քո
բանն ա, կուզես՝ տվածդ խոսքին տեր դարցի՛, կուզես՝ խոսքիցդ
հրաժարվի՛: Ո՛չ թաքավորից խեր կա, ո՛չ էլ թաքավորի աղջկանից:
«Բողազան փաշա օլմագ»¹⁴, ջոջաց խոսք ա: Թոռչին՝ թաքավորի
խնամի, թոռչու տղեն՝ թաքավորի փեսա: Հըլնելու բան չի: Հեոո՛ւ
կաց, մե փորցանք կրգա գլուխներիս: Մենք ծերացեր ենք, դու ես
ափսոս, ջահել ես: Ես չեմ թողե՛ դու ջուրը մտնես, մե ձուկ բռնես,
Հըմա անտեղի կրգնաս, կըկորես: Թաքավորի ոտով ոտ մի՛ պար-
զա, ոտդ քո յորդանի չափով պարզա՛: Թաքավորի աղջկա տված
ոսկիքը մեզի պետք չի, ոսկին գլխակեր բան ա: Հրաժարվի՛ թաքա-
վորի աղջկանից, թող Հանգիստ ապրենք, գիշերը Հանգիստ քնենք,
մեր դատածն ուտենք, ուրիշի փեշքեշը պետք չի: Թո վատ ապրենք,
բան չըկա, Հո չըմեռա՞նք:

Թաքավորը որ լսաց, հրաման կըտա՝ գորքի ու ժողովրդի առաջ
մեր գլոխը կտրեն, մեր թողը քամուն տան: Վնասի կեսից ետ
դառնալը լավ ա: Դու չվանը գցեր ես վիզտ, ման ես գալուս, քանի
չեն ձգե, վիզցդ Հան, էդ ա իմ ասածը: Մնացածը քո գործն ա:

—Հայրի՛կ, էդ բաները ես ասեր եմ թաքավորի աղջկան, Հըմա
սիրտը կպեր ա, մե օր որ չեմ էթում, նեղանում ա, ես էլ եմ մացե
չիվար: Թաքավորի աղջիկ ա, մեկ էլ տեսար՝ հրաման տվեց, գլոխս
կտրեն: Մե թոռչու տղա լայեղ չանա թաքավորի աղջկա Հետ խո-
սա, կըթողե՞ն սաղ մնա: Կաչին կըՀանեն, գլոխը կըկտրեն: Դե Հի-
մա դո՛ւ ասա, Հայրի՛կ, ի՞նչ անեմ:

Թոռչին ասավ.—Բալա՛ ջան, քո ասածը լսալով, ես չեմ իմա-
նում, թե ինչ ասեմ: Մնում ա, որ մենք թողենք էթանք ուրիշ երկիր,
էլ Հնար չըկա: Մենք ո՛չ թաքավորի, ո՛չ էլ թաքավորի աղջկա Հետ
գործ չունենք:

էս տեսակ գործն իրա շարովը գնաց: Թոռչին էլ ամեն օր ձուկ
էր բռնում, տղեն ծախում էր:

Մե օր էլ Ջայռեքից մեկը թաքուհուն ասավ, որ աղջիկը թոռչու
տղի Հետ սիրահարվեր ա:

Թաքուհին որ էս բանն իմացավ, երեսի գույնը թռավ: Ջայռին
զգուշացրեց, որ բերնից խոսք չըթոցնա: Մյուս օրը, որ թոռչու
տղեն ձուկը բերեց, մտավ աղջկա օթաղը, մերն էլ, առանց զգու-
շացնելու, դուռը բացեց էն ժամանակ, որ ըստոնք փաթըթվեր ին

14 Բոշան փաշա չի դառնա (Ծ.Կ.):

իրար: Մերը էլ չըրկառցավ դուռը ծածկա, նստավ, մնաց նստուկ: Ջայռեքը որ էս բանը տեսան, վազան ջուր բերին, երեսները չփին, դոշի կոճակները հառցակին, ուշկը բերին վրեն: Թոռչու տղեն մնաց կայնուկ: Թաքավորի աղջիկը իրա հավատարիմ ջայռին ասավ, որ թոռչու տղին դուս տանա, թո էթա տուն: Հինքն էկավ, մորը գրկեց, տարավ իրա կառավաթին նստացուց, չոքավ հառեչը, ձեռները պաչեց, դրեց երեսին:

Թաքուհին աղջկան նախատեց, ջայռեքին էլ զգուշացրեց, որ եթե մե տեղ էս բանն ասեր են, եռման ջուր կըլցա գլխներին, մագները կըփիտա:

Էրկու-իրեք օր հետո, որ ռանգն էկավ տեղը, թաքուհին թաքավորին ասավ, որ աղջիկը մարթու տալու ժամանակն ա, թո հայտարարա, ուզողները գան:

Թաքավորը աղջկան կանչեց, հետը խոսաց, ասավ, որ մարթու տալու ժամանակն ա, իրա մտքին կա, որ տա վազրի տղին: Ինքը կըմեռնի, վազրի տղեն կըղառնա թաքավոր: Աղջիկը իրեք օր մտածելու ժամանակ առավ: Հըմա ի՞նչ մտածեր, ուզում էր թոռչու տղի հետ խոսա, տենան՝ ի՞նչ են անելու:

Ջայռին հղրկեց՝ թոռչու տղին ասա՛, որ գիչերը այսինչ տեղը սպասի իրանը: Ջայռեն գնաց, թոռչու տղին գտավ, հայտնեց թաքավորի աղջկա կամքը: Տղեն խոսք տվեց, որ կըգա: Ջայռեն խաբարը բերեց:

Թոռչու տղեն էկավ, խոսացին:

Թաքավորի աղջիկն ասավ.— Հիմի էկեր ա ժամանակը: Թե խոսքիդ տերն ես, փախնենք, էթանք մե յանի, թե խոսքիդ տերը չես, ես քեզի վնաս չեմ տա, հորս կամքը կատարեմ, մեր սերին վերջ տանք: Դե խոսա՛, ասա՛ քո միտքը:

— Իմ միտքն էն ա, թաքավորի՛ աղջիկ, որ իմ հառաչի սերը ոչ մեկի չեմ տա: Կմեռնեմ, բայց չեմ տա:

— Դե որ քո խոսքին հաստատ ես, մնացածը ես կանեմ: Ջայռեն ամեն օր քեզի խաբարը կըբերա: Ինչ որ անելու ենք, ջայռեն կասա: Էրկուսն էլ լացան, բաժանվան:

Իրեք օր հետո թաքավորը կանչեց աղջկան, ասավ.— Քո ուզած ժամանակը լրացավ, պատասխանը պատրա՞ստ ա, թե՞ չէ:

— Պատասխանը պատրաստ ա, հայրի՛կ: Ես որոշեր եմ, որ մարդի չէթամ, հըլա ժամանակը չի:

— Չէ՛, աղջի՛կ ջան, ժամանակը մե տարի էլ անցեր ա: Աղջիկը 16 տարեկանից են մարդի տալում, քո 17 տարին լրացեր ա: Քո հորից մի՛ ամաչի, ասա՛, վազրի, վաքլի, դագնադարի կամ իշխաններից որի տղին ուզում ես, սիրտդ ուզած տղին կըտամ:

—Որ սիրտս ուզած տղին կըտաս, ես թոռչու տղին եմ ուզում, Հայրի՛կ, վագրի, վաքլի, դազնադարի կամ իշխանների տղերքը թոռչու տղի մե մատը չարժեն: Էս ա իմ խոսքը: Կտաս՝ տո՛ւ, չե՞ս տա՝ ես մարդի չեմ էթա:

Թաքավորի բերանը մնաց բաց: Ինքը խոսում ա վագրի, վաքլի տղի մասին, աղջիկն ուզում ա թոռչու տղին:

—Մազերդ կըքաչեմ, դա՛նջղ, մեկ էլ էդ խոսքը չասես:

—Հայրի՛կ, դու ասիր, որ սիրտդ ուզած տղին կըտամ, թաքավորի խոսքը խոսք ա, ետ չի վերցվի:

—Ես իշխանների, վագրի, վաքլի, դազնադարի տղերքի մասին ասեցի, որին սիրտդ ուզում ա:

—Իմ սիրտն ուրիշի ա ուզում: Ձե՞ս տա՝ մի՛ տուր, ես ուրիշ մարդ չեմ ուզում:

—Հրաման կըտամ՝ քո թոռչու տղի գլխը կտրեն:

—Թոռչու տղի մահից հետո ինձ կըկախեմ, դեղ կըխմեմ, ջուրը կըզցեմ, մե խոսքով ասած, կըմեռնեմ, ուրիշի չեմ ուզի: Ես թոռչու տղին խոսք եմ տվե: Թաքավորի աղջկա խոսքն էլ խոսք ա:

Թաքավորը մնաց շիվար: Ձենը ցածրցուց, սկսեց համոզել, որ հոր պատիվը չըզցա, ինքը թոռչու խնամի չի դառնա: Ո՞վ կըթողա, որ թոռչու տղեն թաքավոր դառնա: Վազիր-վաքլի նախանձից կըտրաքեն:

—Թող տրաքեն, Հայրի՛կ, ավելի լավ: Քո մահից հետո թաքավոր կըդառնամ ես, մեր կողմը կըքաչենք իշխաններից շատերին: Դու համոզված ես, որ բոլոր իշխանները համաձայն են՝ վագրի տղեն թաքավոր դառնա:

—Ձէ՛, կան իշխաններ, որ վագրին չեն սիրում:

—Տղին էլ չեն սիրի:

—Հիմի ի՞նչ ես ասում:

—Թոռչու տղին եմ սիրե: Հազար թաքավորության հետ չեմ փոխի, էդ եմ ասում:

—Դու էդ ես ասում, ես էլ թաքավորական խոսք եմ ասում: Ա՛ն քո թոռչու տղին, գնա կորի՛, էլ աչկիս չերեաս: Քեզի իրեք օր ժամանակ:

Էս ասելուց հետո բաժանվան: Աղջիկը շատ ոսկի վերցուց, իրեք ձի, ինքը, թոռչու տղեն ու հավատարիմ ջայռեն մե գիշեր քաղաքից հեռացան: Թաքավորը հետո իմացավ աղջկա հեռանալը, շատ փոշմանավ, հրժաճեռին հնար չըկար:

Կանչեց թոռչուն, ասավ.—Թոռչի՛, տղեդ աղջկաս փախցրե, տարեր ա: Քեզի մե ամիս ժամանակ: Գտար՝ գտար: Չըգտար, քեզ էլ, կնկադ էլ կախել կըտամ: Առ էսքան ծախսի փող, գնա՛:

Թոռչին ծախսի փողը վերցուց, կնգան ու թոռը վերցուց, գնաց մե ուրիշ Թաքավորի երկիր: Ետ գալու մասին չէր էլ մտածում: Ոչ էլ տղին էր ման գալում: Գնաց էդ փողով մե դուքան բացեց, առտուր էր անում, մեկ-մեկ էլ էթում էր ձուկ բռնելու, մե մասը ծախում էր, մե մասն էլ տուն էր բերում:

Անցավ մե ամիս, էրկու ամիս, թոռչին չըկա: Թաքավորը մարդ ուղարկեց, որ թոռչու կնգան բերեն: Որտեղի՞ց բերեն, թոռչու կնի՞կ ա մնացե: Թաքավորը նոր հասկացավ, որ թոռչին իրանը խափեր ա, մարդ հղրկեց թոռչուն ման գալու և բռնելու: Դահիճին էլ հրաման տվեց բերելու հրուպեին սպանեն:

Մե հրաման էլ տվեց վազրին՝ էթա աշխարքը ման գա, ուր որ գտնի, թոռչու տղին սպանի, աղջկան էլ ետ բերա:

—Վազի՛ր, կրբերես, աղջիկս կրպսակենք քո տղի հետ, կրդարձենք Թագավոր, ես ու դու էլ ծերացեր ենք, կրնստենք տանը, Թաքավոր տղիդ էլ լավ խորուրթներ կրտանք, թո կառավարա:

Վազիրը շորերը փոխեց, վերցուց իրեք մարդ, մե խուրջին ոսկի, գնաց ման գալու:

Թե՛ վազիրը, թե՛ հրնգերները թոռչու տղին չին ճանչնում, Թաքավորի աղջկան էլ մենակ վազիրն էր ճանչընում: Հրմա թոռչու տղեն վազիրին ճանչընում էր: Վազիրը պտի թոռչու տղին սալխսուլուխով գտներ: Հիմի տենանք՝ հուր գացին թոռչու տղեն, Թաքավորի աղջիկն ու ջայուն:

Զիանքը որ հեծան, թոռչու տղեն ասավ.—Թաքավորի՛ աղջիկ, էթանք արևելյան կողմը, ինչ կըլինի, թող ըլնի, արևելք գնալը խեր ա:

—Իրավունքը քոնն ա, հրմա էլ չըսխալվես, Թաքավորի աղջիկ ասես, մեր գլխին փորձանք կըգա, եթե իմանան, որ ես Թաքավորի աղջիկ եմ: Ինչ անուն քեզի դուր ա գալիս, էդ անունը դի՛ր իմ վրեն:

—Ո՛նելոք ես ասում: Արևելք ենք էթում, քո անունը դնենք Արեգնազ:

—Հոժար եմ:

Գնացին հասան մե մեծ գետի:

Տղեն ասավ.—Արեգնա՛գ, դուք սպասեք, ես անցնեմ, տեսնենք՝ հո չատ խորը չի, հետո դուք կըգաք:

Բայց հենց որ թոռչու տղի ձին մտավ ջուրը, մե քիչ գնաց, էս ձիերն էլ չըկայնան: Արեգնազն ու ջայունն ինչքան գյամերը քաշին, հնար չեղավ, թոռչու տղի ձիան հետևից գնացին:

Թոռչու տղի ձինը լողալով դուս էկավ, հրմա էս էրկուսին ձիան-քի հետ ջուրը քչեց, տարավ:

Թոռչու տղեն ետ դարձավ, որ տեսավ ջուրը ըտոնցը տանում ա գլուխը տփեց, ձին քչեց թբա ցած, որ մե կերպ օգնա, ազատա, կամ աչքից չըկորցնա:

Ջուրը շատ դժավ չէր, գետն էլ քարոտ չէր:

Մե քիչ տարածութիւն գնալուց հետո թոռչու տղեն դեմ առավ ժայռի, էլ չըկարցավ առաջ գնա:

Մինչև ձին քչեց, դես-դեն արավ, ջուրը Արեգնազին ու Ջայռին տարավ:

Թոռչու տղեն ձիանից իջավ, նստավ լացավ: Հաչվեց, որ ամեն ինչ վերջացավ, էթա ման գա, գոնե դիակները գտնի թաղալ:

Իրեք ամիս գետի կրաղները ման էկավ, ո՛չ ձիան ջանդակ, ո՛չ աղջկա ջանդակ չըտեսաւ:

Շատ մարդի հարցրեց, շատ թոռչիների հարցրեց, ոչ մեկը չէր տեսել:

—Բալա՛ ջան,—ասավ մե ծեր թոռչի,—քրոասուն տարի ա էս գետից ձուկ եմ բռնում: Շատ մարդ եմ խեղդվելուց ազատե, հըմա քո ասածներին սաղ ու մեռած չեմ տեսե: Օր չըկա, որ ես էս գետում ձուկ չըբռնեմ: Իրեք ամիս չի, իրեք տարի էլ էտենց բան չի կատարվե:

Գնաց, քաղաքներ, գեղեր ման էկավ, հարցրեց, ոչ մե տեղեկութիւն տվող չըկար:

Ետ դարձավ, էկավ էտ թոռչի ծերունու մոտ, ասավ.—Պապե՛, դու ծերացեր ես, ես դառնամ քեզի տղա, ձուկ բռնեմ, դու տար ծախա՛: Ես քեզանից փող չեմ ուզում, հացփոր կաշխատեմ:

Շերունին համաձայնվավ, մե քանի խրատ տվեց, ձկները վերցրին էկան տուն:

Շերունու միտքն ուրիշ էր: Մտածում էր, որ թաք տղա ա, տենա, թե որ լավ տղա ա, աղջիկը կըտա էս տղին, կըդարձնա տնփեսա: Թոռչու աղջիկը հենց որ էս տղին տեսավ, սիրտը կպավ: Տեսավ, որ տղեն ձեն չի անում, խոսք չի գցում, նիյաթը կախեց: Մեկ-էրկու ամիս տղեն էթում էր ձուկ բռնելու, իրիկունը տուն էր գալում: Թոռչու աղջիկը լավ սեղան էր պատրաստում, նստում ուտում ին: Մե անգամ էլ թոռ գցելու ժամանակ տեսավ՝ մե ձիավոր ա գալում: Ձիավորն առանց վախենալու ձին քչեց գետը, որ անցնի: Ջուրը դժավ էր, ձիավորին ու ձիանը քչեց տարավ: Թոռչու տղեն, էս որ տեսավ, իրանը քցեց էտ դժավը, հասավ ձիավորին, մե ձեռով բռնեց, մեկէլ ձեռով լող տալով ձիավորին դուս բերեց, ոտներից վերցուց, գլխի վրա կախեց, կուլ տված ջուրը ետ եկավ: Մե քիչ էլ տրորեց, շուռ-մուռ տվեց, խեղդվողի ուչքը վրեն էկավ:

էդ ժամանակ ճանչըցավ, որ վազիրն ա, լիզուն կծեց. «էստեղ մե բան կա»: Վազիրի շորերն հանեց, չորացրին, ինքը կրակ արավ, ձուկ էփեց, նստան, կերան:

— Դե հիմի ասա՛, օտարակա՛ն, ո՞վ ես, ո՞ւր ես, ո՞ւր ես էթում, որ էս փորցանքին ուստ էկար: Լավ ա, որ ես ըստեղ ի, Աստուհրամանով էր, որ քեզի ազատեցի: Հըմա ափսոս, որ ձիանդ Չուրը տարավ, չըռից կըզա, կըսպանա, մոտիկ չըռ կա:

— Է՛, թոռչի՛ երիտասարդ, ես Փլան թաքավորի նոքարն եմ: Էդ թաքավորի կամքն եմ կատարում: Մե հարամզադա թոռչու տղա թաքավորի աղջկան առե, փախեր ա: Հիմի ման եմ գալում, տեղներն իմանամ, էթամ թաքավորին հայտնեմ: Հրաման ա տվե, որ գտնողը, եթե էդ տղին սպանա, աղջկան էլ ետ բերա, իրա քաշով ոսկի կըստանա: Ես էլ քյասիբ մարդ եմ, մտածեցի, գտնեմ, հարուստ ապրեմ: Էտենց մարդ էս կողմերում չըկա՞, չե՞ս լսել: Թե տեղը գիդաս, ասա՛, 1000 ոսկի էլ դու կըստանաս, էլ էս ջրերի մեջ չես տանջվի:

— Էդ փախցրող տղի նշանները չե՞ս ասի, օտարակա՛ն:

— Տղին չեմ տեսե, աղջկան լավ եմ ճանաչում:

— Էդ տղեն հեր, մեր չունի՞, թաքավորը նրանց չի՞ բռնել:

— Հերն ու մերն էլ տղի նման հարամզադեք են: Հերը թաքավորին խաբեց, ճամբի ծախս առավ, որ էթա տղին ման գալու, կնիկն առավ ու փախավ, թոռչին էլ ա կորե: Մարթ ա չըրկե, թոռչուն էլ են ման գալում: Թոռչուն էլ սպանելու հրաման կա:

Թոռչու տղի սիրտն հանգստացավ, որ իմացավ՝ հերն ու մերը փախեր են:

— Օտարակա՛ն, քո ասած մարդուն ես տեսել եմ էրկու ամսի առաջ: Թաքավորի աղջկան ու ջայռին ջուրը տարեր ա, տղեն լացով, մղկտոցով ման էր գալում, գնաց:

— Ո՞ւր գնաց, չիմացա՞ր:

— Էս գետի ափով գնաց ցած, ասում էր, որ գոնե դիակը գտնի, թաղա, ետ էթա իրանց երկիրը: Հըմա չասավ, որ թաքավորի աղջիկ ա խեղդվողը, ասավ՝ էրկու աղջիկ ա խեղդվե: Ուրեմն մեկը թաքավորի աղջիկը կըլնի, մյուսը՝ ջայռեն, ես քո ասածից էտենց եմ հասկանում:

— Դուզ ա, էտ ա, որ կա, — ասավ վազիրը:

Էս էրկուսը թո խոսան, թոռչու տղեն վազիրից խոսք դուս բերա, միտքը լավ իմանա, մենք դառնանք թաքավորի աղջկա ու ջայռի յանը, տենանք ի՞նչ հելան, ո՞ւր գացին, խեղդվա՞ն, թե՞ ազատվան:

Թոռչու տղեն, որ դեմ հելավ դասաբին, դես գնաց, դեն գնաց, որ ճամբա գտնի, ջուրը աղջիկներին տարավ: Էդ ժամանակ մե քանի ձիավոր ջուրն անցնում, էթում ին, որ տեսան, էրկուսին էլ դուս բերին, ուչքները վրա բերին, հետները տարան:

Տարան մե քաղաք: Մուլթն էր: Ոստիկանները չըջապատեցին, բոլորին զինաթափ արին, տարան քաղաքապետի մոտ:

Քաղաքապետը քննեց, գործի մանրամասնությունը որ հիմացավ, էս մարդկանց բաց թողեց, գենքերը ետ տվեց, ասավ՝ գացեք:

Թաքավորի աղջկան ու ջայռին պահեց:

Թաքավորի աղջիկը չասավ, որ հինքը թաքավորի աղջիկ ա: Ասավ, որ էս աղջիկը մարդիս քուրն ա, իրեքով էթում ինք այսինչ քաղաքը: Ջուրը մեզի տարավ: Հիմի չեմ իմանում, թե մարդս ո՞ւր ա, խեղդվա՞մ, մնա՞ց, Աստված ա իմանում:

—Լավ, —ասավ քաղաքապետը, —ամեն օր օրական իրեք սալդատ կրտամ, գնացեք մա՛ն էկեք, կարող ա գտնեք կամ մե տեղեկություն իմանաք:

Մե օր էլ թաքավորի աղջիկը, ջայռեն, իրեք սալդաթ հետևները քցած էկան էդ գետի ափը: Էն վախտ էկան, որ վազիրն ու թոռչու տղեն նստե խոսում են: Թաքավորի աղջիկը որ հեռվից տեսավ, վազիրին էլ ճանչըցավ, թոռչու տղին էլ: Մոտ չէկավ:

Սալդաթներին ասավ. —Գնացեք էդ երկուսին էլ բանտարկե՛ք, տարե՛ք քաղաքապետի մոտ: Էն ջահել տղին չընեղացնեք, հըմա էն մեծին ինչ կուզեք, արեք, տփելով տարեք, մենք ետ ենք դառնում քաղաք:

Սալդաթները էկան, թրերը քաշին, կայնան:

—Քաղաքապետի հրամանն ա, որ ձեզ տանենք իրա մոտ, դե վե՛ր կացեք:

Վազիրը նեղացավ. —Մենք հո ավազակ չե՞նք, ձուկ բռնող ենք, քաղաքապետը ի՞նչ գործ ունի թոռչու հետ: Դուք սխալվում եք, սալդաթներ՛ր, գնացե՛ք ձեր ճամբով:

Թոռչու տղեն չըհակառակվավ, վեր կացավ, հըմա վազիրը հակառակվում ա: Մե քանի պեթ տվին վազրիս մեջքին, առաջները գցին, տարան: Էս հողը ուրիշ թաքավորի հող էր: Թաքավորի աղջիկը մտավ քաղաքապետի մոտ, ասավ, որ հիմի էրկուսին զինվորները կըբերեն:

—Ձահելն իմ մարդն ա, էն մեծը լրտես ա, հարևան թաքավորի վազիրն ա, չորերը փոխեր ա, էկեր ա լրտեսություն: Դե քննա՛:

Բերեցին: Ջուկ-ջուկ քննում են: Տղեն ամեն բան դուզն ասավ, միայն չասավ, որ իրա կնիկը թաքավորի աղջիկ ա:

Վազիրին որ քննեցին, վազիրն սկսեց խաբել, ասավ. — Ես թոռ-
չի եմ, էդ էլ իմ տղեն ա, ձուկ ենք բռնում, ձեզի ի՞նչ նեղություն
ենք տվե:

— Դու ձուկ բռնող չես, լրտե՛ս, չպիո՞ն, — ասավ քաղաքապե-
տը, — դու ֆլան թաքավորի վազիր նուռիջանն ես:

Վազիրի լիզուն բռնվավ:

— Դո՞ւզ ա, նուռիջա՞ն:

— Դ-դ-դուզ ա, քաղաքապե՛տ:

Քաղաքապետն հրամայեց՝ վազիրին տանեն, գլխը կղրեն, իսկ
թոռչու տղին տանեն դռնախ աղջիկների մոտ:

Թոռչու տղեն, որ թաքավորի աղջկան տեսավ, կարծեց, թե
երկնքից ընկավ, փաթըթվե՛ր ա, էլ բաց չի թողում: Հո սաղ օրը
չըլտի փաթըթվեն ու մնա, իրար թողին, նստան խոսացին: Իրեք
օր հետո քաղաքապետին շնորակալություն հայտնեցին ու գնացին
ծերունի թոռչու մոտ:

Ծերունի թոռչու աղջիկը, որ սիրահարվե՛ր էր էս տղի վրեն,
ասավ. — Բա Արեգնազին տենողը ընձ կուզա՞, ինչ անենք, որ թոռ-
չի ա:

Թաքավորի աղջիկը ոսկիքը կարեր էր շորերի տակը, չէր
կորցրե: Թոռչուն ու թոռչու աղջկան նվերներ առան, շնորակալու-
թյուն արին ու գնացին՝ տղի հորն ու մորը ման գալու: Շատ ման
գալով գտան ու ապրան հոր մոտ:

Անցավ հինգ տարի: Ունեցան էրկու տղա:

Թոռչու տղեն հորն ասավ. — Հայրի՛կ, գնա թաքավորին ասա՛,
որ աղջկադ էլ, տղիս էլ, թոռներիս էլ գտել եմ: Հիմի թաքավորի
ջղայնությունն անցեր ա:

էս բանը որ թաքավորը լսաց, վերցուց քսան ֆայտոն, զորք,
էկավ աղջկան, փեսին, թոռներին, խնամուն տարավ:

Հետո թաքավորը մեռավ, թոռչու տղեն դարձավ թաքավոր:
Ըստոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնե՛ք ձեր մուրազին: